ՄԵՍՐՈՊ

Չիապանը լավ Հայոց պատմություն գիտեր և սարերի միակ մարդն էր, որ զգում էր իր հայությունը: Մյուսները գիտեին, որ իրենք գառնարած, հորթարած են, հնձվոր,կթվոր, խուզվոր են, որ ցրտերի հետ իջնելու են ձորը՝ Ծմակուտ, շոգի առջևից գովի հետ դուրս են գալու սարերը: Չիապանին այդքանը քիչ էր թվում, և նա պատմում էր Հայոց պատմություն, ինչը որ լավ գիտեր: Եթե լսող էր ունենում՝ մի քիչ հնարում էլ էր, երեկվա պատմածն այսօր սուտ էր համարում, Հայոց պատմության սկիզբը մեկ քշում, տանում, չորս հազար տարվա խորք էր իջեցնում, մերթ ծլեցնում էր երեկվա միջից, նայած այդօր ինչ վերաբերմունք ուներ մեզ հարևան ուրթին:

— Հայերին Լեռն է հնարել: Մինչև Լեռն, սուտ է, հայեր չեն եղել: էն է Լեռյի ժամանակներն էր, էլի, սարի պես մարդուն տվին աչքիս դեմ շուռ տվին՝ մի ձեն հանող չեղավ: Հայ կա՞ր՝ որ հայի համար ձեն հանող լիներ — կաթ, ոչխար, ես ինչ իմանամ ուրիշ ինչ: Մերանը Լեռն գցեց: Մածունը ոնց են սարքում, կաթի մեջ մերան են գցում՝ դառնում է մածուն, Լեռն հայերին էդպես է հնարել: Հովհաննես Թումանյանի «Շունն ու կատուն»— ոչ կատուն է արհեստավոր եղել, ոչ էլ շունը անգլխարկ, գլխարկը շան ինչի՞ն է պետք, այտա, Հովհաննես Թումանյանը նստել ու երեխեքի համար հնարել է: կարդում են: էն է մյուս սեղանին էլ Լեռն է նստել ու մեր հայերիս պատմությունը հնարել: Զարմայր նահապետ, չէ՜ մի, զահրումար նահապետ:

Սարվորները գառնարած, տավարած մարդիկ էին, չէին վիճում, իրենցը խուզելն ու կթելն էր՝ խուզում ու կթում էին: Այդ բոլոր բաները՝ Լեռն, Զարմայրը, Քրիստոսի ծնունդից առաջը, Հովհաննես Թումանյանը՝ բոլորը ձիապանի տան կարասիներն էին, ուզածի պես դասավորում էր, և սարվորները մտածում էին, որ նա ձիապան չէր լինելու, երևաններում-բանում մի տեղ դասատու էր լինելու:

— Գայլ Վահան։ Եկան՝ջարդեց. եկան՝ջարդեց՝նորիդ եկան։ Եկածին ջարդեց՝ հաշվեցին, հաշվեցին — Պարսկաստանը սրբել էր, էլ Պարսկաստանում մարդ չէր մնացել։ Աշխարքում հիմա էլ Պարսկաստան չկա, հայոց մեր գելը սրբել է։ Գայլ Վահան, չէ՞ մի, քաջ Նազար։

Մեկ էլ՝հակառակն էր ասում։ Թե ուրեմն տղամարդ ենք եղել՝ որ թուրքը հազար տարի բկներիս նստած դիմացել ենք։— Պարծենալու բան է,— ասում էր,— պիտի պարծենանք։

Նրա ասածներից չէին ուրախանում և չէին տխրում։ Ուղղակի՝ իրենց գործին էին — կթում էին, խուզում էին, թրջվում ու չորանում էին, խոսում էին ***նրանց*** *հետ թուրքերեն և իրենց ասածը և նրանց ասածից մի երկու բան քեզ ասում էին թուրքերեն ու թարգմանում հայերենի, և դա գեղեցիկ էր, ծիծաղում էին թուրքերեն լավ չիմացողների վրա, աշխօր էին ստանում, փող էին ստանում,— ապրում էին։ Եվ տպավորությունն ահա այս էր, հիսունհինգ-հիսունութ տարեկան մի մարդ, Ղազարյան Մեսրոպ անունով, ինքն իր համար խոսելով պտտվում է երամակների, հոտերի ու ամպերի միջև կանաչ սարերում, ուրկից երևում է այս անսահմանորեն մեծ աշխարհից Գուգարքի մի մասի միայն մի մասը։ Նա չէր խոսում թուրքերեն և ոչ էլ ուզում էր* ***նրանք*** *հայերեն խոսեն։ Նա նրանց թուրք էր ասում, որպեսզի նրանք վիրավորվեն, բայց նրանք չէին վիրավորվում, որովհետև ամենևին էլ թուրք չէին։ նրանց զբաղմունքն այդ չէր, թրքությունը չէր նրանց զբաղմունքըլ այլ, մերոնց նման, ոչխար, պահելը, խուզելը, թրջվելը, չորանալը, անձրևին ու աշխարհին հայհոյելը։ Եվ մերոնց մեծերը Մեսրոպին ասում էին։ — Դե լավ, էլի, ձենդ կտրիր։*

Բայց մի տեղ կար, երբ Մեսրոպը կարծես հասնում էր նպատակին։ ***Նրանք*** *սար էին գալիս իրենց հետու դեղին հովիտներից, իսկ սարերին մոտիկը մեր գյուղն էր և սարերը մեր սարերն էին, համարյա թե կլոր տարին՝ աշնանը, ձմռանը, գարնանը մերն էին։ Ամռանը նրանք իրենց քոչերով հա գալիս էին, և մեր տունը դառնում էր ուրիշի տուն։ Աղբյուրի գուռը*

Արթընանց Արթինն էր գցած լինում, մեկ էլ՝ նրանց ոչխարն էր կիտվում գոի վրա։ Է՛, հարյուր տարի առաջ արոտներում ոչխարին աղ տալու աղաքարեր թաղած էր լինում Ղազարի Ավետը, մեկ էլ՝ նրանց ոչխարն էր կուտապ-կուտապ գալիս աղաքարերի վրա։ Ձորի մեր անտառում հաճարի մեր ծառերին մենք գրած էինք լինում մեր անունը և կարծած, թե ծառը մեզնից հետո մեր անունը պահելու է դեռ երկար ու երկար, մեկ էլ մեր գիրը վրան այդ ծառը գոմեշների քամակով էր տալիս նրանց չոբանն ու, հո հա հո, քաշում իրենց ուրթ մեր անունը վրան այդ ծառը։

— Թուրքերր եկա՛ն,— ասում էր ձիապանը։— Չկային, է, չկային։ Քսան թվին ստեղծվեցին։ Սերգեյ Միրոնովիչ Կիրով,— ասում էր ձիապանը։— Երեսուն տարում ոնց ժողովուրդ դարձան։ Սոցիալիզմի մերր չմեռնի, ապա մի ասա սոցիալիզմ։ Սրանց սոցիալիզմն ստեղծեց, չկային, է, չկային, ստեղծեց, քշեց Արթինի աղբյուր՝ եղբայրաբար ջուր խմեք։ Լույս դառնաս, Արթին, դու էլ որ չէիր եղել՝ սրանց ոչխարը որտե՞ղ էր ջրվելու։ Ես ասում եմ բողոք գրենք Մոսկվա՝ մեր հանդերը մեզ տան, հը՞։

Մեր հոտը մի եզրով քսվում էր նրանց խոտհարքին, կամ նրանց հոտն էր կոխ տալիս մեր արոտը, և տեղնուտեղը փետակռիվ էր ճայթում։ Գլուխ էր ծակվում, թև էր ջարդվում, շապիկ էր ճղվում, նրանք մերոնց հայհոյում էին հայերեն՝ որպեսզի մեր սիրտը խառնի, և մերոնք նրանց թուրքերեն էին հայհոյում, շներն էին իրար հասնում և շնակույտ էր լինում և այլն։ Հետո հացի էին նստում։ Կենաց էին խմում և բարիացած զարմանում էին, թե ինչու է փաթաթված դիմացինի գլուխը, ճղված՝ շապիկը, վզից կախ՝ թևը։ Կռվի մասին խոսք չէր լինում, և ասես թեները ջարդվել էր հաց ուտելիս։ Ձիապանն իրիկունը թքոտում ու մերոնց ուշունցի էր կապում։

— Էդ՝ կարոտել էիք, գնացել էիք մի քիչ ֆարսերե՞ն խոսեք։ Էդ՝ հունարեն էիր խոսում, զոռից գլուխդ ծակվեց, հա՞, Մուքելանց դատարկ։ Տո՝ լի՛րբ եք, լի՛րբ, կնկա լիրբ եք, ով ձեռը մեկնում է՝ չէ ասել չունեք։

Սարվորները լռում էին։

— Հր՛,— լարվում էր ձիապանը,— Մասկվա— Կրեմլ, Պրեդսեդատելյու Պրեզիդիումա Վերխովնովո Սավետա Սայուզ ԷՍԷՍԷՌ։

Դա տպավորություն թողնում էր, սարվորներն ասում էին.

— Սայուզ ԷՍԷՍԷՌ, հետո՞։

— Առաջարկում ենք թուրքերին մեր խոտհարքներից հանել։

Սարվորները լռում էին։

— Հր՛,— բղավում էր ձիապանը։

— Ամոթ է,— նեղվում էին սարվորները,— հետները նոր հացի էինք նստած։

— Այ քթիցդ գա էդ հացը,— հայհոյում էր ձիապանը,– քթիցդ գա էդ կերածդ հացը՝ որ քու զավակը չի ունենալու որ ուտի։

Հետո մեկն ասում էր անհոգ-անհոգ.

— Դե լավ, էլի, Մեսրոպ, սարեր են, էլի, կապրենք, էլի, ինչո՞ւ անտեղի նեղանանք-նեղացնենք։

— Հա՛յ,— կատաղում էր ձիապանը,— Քեզ մի կտրուկ բան է պետք, դաշտը իրենցն է, սարերդ էլ են խլում, հա՛յ։ Ոչխարդ արոտ չունի՝ սարիդ կեսր տվել ես նրանց։

Սարվորներն իրենք իրենց վրա սրտնեղում ու ծիծաղումդ էին.

— Դե, բա հո չէի՞նք թողնելու էս տժտժան շոգով ոչխարն էն շոգ դաշտում պահեին։

Ձիապանը խելագարվում էր.

— Տո, տո, տո, տո, տո, դե դաշտը շոգ է՝ էգուց էլ թող տան շլինքդ կոտրեն։

Ուրթի մթան միջից մեկ էլ ասում էին.

— Դե որ էդքան լավ մարդ ես ու չես ուզում իմ շլինքը կոտրեն՝ ձիդ նրանց խոտհարքը մի թող։

Ես այդ ժամանակ փոքր էի, դատարկ փամփուշտի մեջ լուցկու գլխիկներ էի լցրել, ծեծելով փակում էի պարկուճի բերանը որ խփեմ տրաքացնեմ, բայց Պայծառ մորքուրը գլխիս բզեց ու խլեց պարկուճը։ Իմ պարկուճը ես ուզում էի ետ խլել նրանից, իսկ նա կռացել պոնձի տակ կրակը փչում էր, և ես ինչպես էլ

պտտվում էի իմ դեմ նրա քամակն էր: Պարկուճը նա շպրտեց կորցրեց, և ես քացի տվեցի նրան ու փախա: Իսկ տղամարդիկ դեռ վիճում էին:

— Կուչ արի՛, մտիր մեջըդ, ոչխարդ նրանց խոտհարք չթողնես:

— Դու քո ձիուն լավ նայիր, ես իմ ոչխարի մոտից հեռացողը չեմ:

— Իմ ձին իմ սարերում ուզենա էսպես է գնալու, ուզենա՝ էսպես: Ազատ քամի է:

Սահմանի մի կարգին նշան չկար: Արոտն իր համար վերուվարելով գնում էր և հոտն էլ իր համար արածելով բացվում էր, և այդտեղ պարզվում էր, որ **նրանց** մտքում դա իրենց խոտհարքն է եղել: Եվ նրանց հանդապահ մեր հոտր փախ ցրրեց տարավ իրենց խոտհարքներից: Մեր հովվից հոտն էնքան սիրուն էր խլել նրանց հանդապահը, որ մեր հովվի քեֆն ուղղակի եկել էր: Ասում է,եկավ ասավ ինչո՞ւ ես հանդն արել: Ասում է, ասի թող մի կուշտ արածի: Ասավ լա՛վ: Թե՞ չարանում ես, ասի: Ասում է, կողքին նստել-նստել էր, մեկ էլ տպռուշ արել ու փախել ոչխարի միջով: Սպիտակ թաշկինակր գլխից վերև թափ էր տվել ու վազել դեպի իրենց գոմերր՝ անալի ջարդվող հոտր ետևից: Մեր հովիվն ասում էր. մեկ էլ տեսնեմ մոտս ոչխար չկա — ոչխարը գոռալով ձորում գնում է թաշկինակի ետևից, ոչխարն աղ է ուզում: Տարել գոմն էր արել, կողպեքր դրել վրան, շունը դռանը կապել ու գնացել իրենց մեծերի հետ արձանագրություն էին կազմել: Մերոնց վարիչն այստեղ հովիվների վրա էր գոռգոռում, հովիվներր վարիչին էին մեղավոր հանում, թե նա ժամանակին աղ չի հասցրել ոչխարի համար, իսկ Մեսրոպը հրացանը յուղում ու մրթմրթում էր.

— Արձանագրությո՛ւն, իհա՛րկե արձանագրություն: Արձանագրություն կազմել են սովորել:

Հետո նշան բռնեց հեռու քարի մոտ նիրհող շանն ու կանչեց. «Չամբար»: Շունը ցցեց ականջները: Շունը ցցեց ականջներր՝

Մեսրոպը կրակեց։ Շունը կլանչելով մի կողմ նետվեց, ապա, հանգստացած, թաթով շոյել սկսեց ծակված ականջը։

— Փոխանցեք, այտա, տագանքը Լոռուց է… բա չէ՞։

— Ամոթ է, Մեսրոպ։

— Ամոթ է, բա չէ՞։

— Դե սարեր են, էլի, Մեսրոպ,— ասացին,— տուգանք էլ կտանք, տուգանք էլ կառնենք, կռիվ էլ կլինի, հաշտություն էլ, բա էլ ինչի՞ ենք հարևան։ Մ՛յ,— ասացին,— էդուց իմ պարտքը լինի իրենց ոչխարը փախցնեմ տանեմ մեր գոմերը։ Տուգանենք, իրենցից առնենք տուգանքը, իրենց տուգանքի դիմաց տանք իրենց։

*Նրան պահեցին՝ չմնաց։ Սարի էն երեսին թշնամի չկա, թշնամին դո՛ւք եք, ասաց, կկոտորեմ բոլորիդ, ասաց, ու հրացանը քաշեց։ Ու հրացանը քաշած՝ թշնամի եք, ասաց, հայ չկա էս աշխարքում, ասաց, աննամուս էիք ու աննամուս էլ կաք։ Հայեր, իրոք, չկային։ Կային միայն հովիվներ, որ թքոտեցին հեռացող Մեսրոպի ետևից, ասացին, որ լավ կլիներ նրան այնտեղ տային շանսատակ անեին։ Նա գնաց, անցավ բլուրը, գլխավերեց **նրանց** ուրթի վրա։*

Մի կանաչ զմրուխտ օր էր։ Ձորի հատակներում կարմրին էր տալիս նրանց գոմերի կղմինդրը, որ մեր Ծմակուտի կավից թխել էին ստեփանավանցի աղյուսագործները։ Ուրթի վրան-ները կապույտ ծուխ էին ծխում։ Կանչերին երևում էր ինչպես է աղեղ տալիս հնձվորի գերանդին, և լսվում էր կտրվող խոտի վսսյունը և թե ինչպես է պողպատի զնգոցը խլանում կարճ ու խիտ խոտի փափկությամբ։ Գոմերից դեսը, մի կալ տեղ, ցուլեր էին կռվում։ Տեղական սրապոզը քրքրում էր ցեղականին, որ բլրաչափ, մի բան էր, բայց պոզերը կողքահան էին ու բութ։ Մեսրոպը հասկանում էր, որ ցեղականը փչանում է, հարկավոր է գնալ, եղանով-մահակով-կրակոցով վախեցնել սրապոզ տե-ղականին։ Եվ Մեսրոպը զարմանում էր, թե ինչու նրանց մոտ

մարդիկ չկան։ Եվ տեսնում էր, որ հնձում են, կթում են, խուզում են — անում են իրենց կարճ ամառվա գործը։

Չպետք է այդպես լիներ։ Մի բան սխալ էր։ Մեսրոպը պիտի յուղեր հրացանը, բլուրն անցներ, և նրանց ուրթի մոտ նրան հրացանով զինված պիտի սպասելիս լինեին թշնամիները։ Մեսրոպը պիտի գնար նրանց վրա, աչքը չպիտի թարթեր, ինչպես որ հորն անթարթ էր նայում ալփաուտեցի արնախումը։

*Ես այդ ժամանակ մանկավարժական ինստիտուտում ընդունելության քննություններ էի հանձնել, կարծում էի ընդունվել եմ, չգիտեի որ չեմ ընդունվել, և պարապմունքներն սկսվելուց առաջ գնում էի սարերը։ Ուրթում մի բան էր պատահել, բայց թե ինչ՝ ես չէի հասկանում և սարվորներն էլ չէին ասում։ Սարվորներն իրարից նեղացած էին, վարիչը հովվին ասում էր նրան ոչխարից հեռացնելու, **նրանցից** մի երեխա է բերելու չոբան, հովիվն ասում էր՝ այտա, հիմի ես մեղավո՞ր եմ, որ ոչխարի անալի բնությունը նրանք էլ գիտեն։*

Մեր ուրթից՝ բլրի գլխին երևաց Մեսրոպը։

— Արի, արի, հրեն հա՛,— կանչեցին ու ձեռքով արեցին մեզոնք։ Եվ նա, բլրի գլխին նստած, լսեց թե ինչպես միահամուռ ծիծաղեցին մերոնք։ Սարերում այդպես է, շշուկը մի փարսախ հեռավորությունից լսվում է։ Եվ սարերում օդը պարզ, պարզ է։ Բոլորովին կարճացած ծխախոտը բութի ու ցուցամատի արանքից Մեսրոպը շպրտելու պես արեց ու շուռ եկավ, և ծուխը վզնոցի պես ծածանվեց պարանոցի երկու կողմից։

Ուշունց տալով իջավ, ձենը գլուխը գցած մոտեցավ, մոտեցավ, թողեցին ուշունց տալով մոտենա, մոտենա՛— խփեցին փռեցին գոմի դռանը։ Ու շարունակեցին իրենց հունձը, կիթը, խուզը։ Ու շատ ծիծաղելի էր գոմի մոտ ընկած այդ բիձեն, նիհար-միհար, երեսը մազոտ բիձեն, կողքին՝ որսորդական հրացան, մեջը՝ փամփուշտ, փամփուշտի մեջ՝ կոտորակ,

այնպես որ եթե հանկարծ կրակած լիներ ու կրակոցն առած լիներ ***նրանց*** *այդքանից մեկնումեկի երեսին՝ այդ մեկի դեմքը հետո չէչոտ կմնար: Անտեր-անտիրական այդպես ընկած էր գոմի մոտ, նրանք նրա գլխին ջուր լցրին, ուշքի բերեցին, վերքը կապեցին ու տարան իրենց ուրթ: Պառկեցրին մի քիչ հանգստացավ, նաղլ արին նաղլ լսեց, հետո վրա նստեցրին իրենց հետ հացի: Իրենց հեռու տաք հովիտներից ձմերուկ էր եկել, ձմերուկ կտրեցին, հետո պառկեցրին մի քիչ էլ հանգստանա ու ճամփու դրին: Ձորից կամա՛ց բարձրացավ, թևի տակ՝ ձմերուկ: Ասել էին արյուն կորցրած ցամաքած մարդ ես, կկտրես կուտես: Ասում էր աղվանների հյուրն է եղել, հացոտ ժողովուրդ են, ասում էր, էս ոտներիս տակի հողը նրանց հողն է, ասում էր, ես զարմանում եմ, ասում էր, թե ինչու են մեզ թողնում իրենց հետ հարևանություն անենք: Հրացանին ձեռնափետի տեղ սյուն տալով, լանջի թեքությունից կուզիկ՝ ձորից կամաց բարձրացավ: Մեր ուրթի մոտ ինձ տեսավ:*

— Այ տղա, մեր էս հայ ազգը վայ թե մի մե՛ծ սուտ է,— ասավ:

Եվ անցնելուց հետո՝

— Այսինքն էնքան էլ մեծ չի, եղած-չեղածն էս է հատել գնացել է՛:

Հետո հարցրեց թե ով եմ և մոլորվեց:

— Հա,— ասաց,— էն է որ ծառի շվաքից ճամփա դուրս եկան՝ Ղազարի Ավետը քո պապի անունը տվեց, ասավ կասես Թոմոանց Ավետըքի տղեն եմ: Թոմոանց Ավետըքի տղեն եմ, հա: Քո պապը նրանցում մեծ հարգանք ուներ:

Քիչ հետո եկավ Քառանց Վանու ձայնը՝ «ըհը, քաղպարապմունք սկսվեց», ապա՝ Մեսրոպի ձայնը:

— Ես զարմանում եմ,— ասում էր,— թե ինչո՞ւ են իրենց սարերը մեզ հետ կիսել: Գոնե կարգին հարևան լինեինք, երկրի երեսին ախր ման գալու ապրանք չենք: Հա՛, շատ եմ զարմա-

նում։ Գայլ Վահա՛ն... Եկան՝ ջարդեց, եկան՝ ջարդեց, էնքան ջարդեց՝ եղավ քաջ Նազար։

Մեր վրանի դռնից ես կանչեցի.

— Գայլ Վահանը պատմական եղած անձնավորություն է, քաջ Նազարր հնարովի է։

Պահեստների մոտից շների միջից Քառանց Վանին զգուշացրեց.

— Գործ չունես, քաղաքացի։

— Դասատուդ գիտի,— դեպի մեր վրանը շուռ եկավ Մեսրոպը։

— Դասատուս ձիարած չի,— կանչեցի ես։

— Հիը, քաղպարապմունքն սկսվեց,— պահեստների մոտից կանչեց Քառանց Վանին։

— Ձեռիդ ճար չկա՝ աղվան ես ասում,— կանչեցի ես,— նրանք աղվան չեն։

— Խեղճ մարդ եմ,— ասաց Մեսրոպը,— չգիտեմ նրանք ինչ են, բայց քու պապը նրանցում շատ մեծ հարգանք ուներ, շա՛տ։

— Դու քո գործն արա, դու քո գործն արա,— հացը բկում՝ վրանից դուրս թռավ ֆերմայի վարիչը,— հրեն հա, ձիդ տվել խոտհարքը փչացնում է, դու քու գործն արա։ — Վարիչը նրան հրեց դեպի հեռու սարահարթը, ուր կարմիր հրդեհի պես քշվում ու ծառս էր լինում նարնջի երամակը։

— Լևո՛ն,— ասաց Մեսրոպը, և նրա ռունգերը սպիտակելով լայնացան։

— Գնա, ձիդ խոտհարքներից գնա հանիր ու արի խոսենք։

— Լևո՛ն,— ցածր շշնջաց Մեսրոպը։

Լևոնը ձենը գլուխը գցեց։— Նայեք, այ ժողովուրդ, Լևոն շանորդին մեղավո՞ր է, Լևոն շանորդին վա՞տ է ասում, որ ասում է խոտհարքը փչացնում ես։

— Լևո՛ն,— շրթունքները շարժեց Մեսրոպը։

— Ինչ-ի՛նչ,— ծորտաց Լևոնը,— ինչո՞ւ ես հայհոյում։ Չես ուզում ձի պահել՝ գնա հայ ժողովրդի պրոֆեսորությունդ արա,

ես ձի պահող կգտնեմ, ձի՝ ես կպահեմ։ Սա ի՞նչ է ուզում ինձանից, այ ժողովուրդ։

Կարծես թե կռիվ էր լինելու, և Լևոնն ուզում էր մարդիկ տեսնեին նրա մեղավորությունն ու իր անմեղությունը նախքան Մեսրոպը կխփեր։ Իսկ սա խորքերից շունչ էր քաշում, կողքահան նայում էր Լևոնին և կարծես թե բան էր ծամում։ Ես կանգնել էի երկուսի մեջտեղը, և իմ ոսկորներն զգում էին Մեսրոպի ծուռ մատների ուժը, իմ գլխում տժժում էր եղունգները ջարդված նրա թաթի կոշտությունը։ Լևոնը բարձրաբարձր էր խոսում վախից, բայց առաջին ապտակի հետ նրա վախը կդառնար կատաղություն, ու իմ մտքում ծանր էր և նրա ձեռքը։ Լևոնը վրա տված խոսում էր, ասում էր ձիապանը կարգին չի աշխատում, երամակը թողած քիթը մեզանից վեր բաների մեջ է մտցնում, ձին խոտհարքներում՝ Մոսկվա — Կրեմլ է ասում,— իսկ Մեսրոպը չէր խոսում, նա սպիտակել մոխիր էր դարձել, նրա շրթունքները շարժվում էին առանց ձայնի և ռունգերը լայնանում-նեղանում էին։ Լևոնը վախենում էր, ձեռքերը շուտ-շուտ առաջ էր գցում և հենց վախից էլ առաջինը Լևոնն էր խփելու։

— Ամոթ է,— գոռացի ես,— վրաներդ ծիծաղում են, ամոթ է։

— Ո՞վ,— Լևոնը խորամանկ էր, այդ պատեհ առիթով Մեսրոպից շուռ եկավ։— Ո՞վ է ծիծաղում։ Ծիծաղողը գլուխը քարին է տալիս։— Իբր թե կռվից ինքը խուսափող չէր, ծիծաղող շանորդիները խանգարեցին իրեն։ Էլ Մեսրոպին չդառնալով, Լևոնը մի կողմի վրա գնաց, իբր, գործի, և իբր թե վեճը ոչինչ էր, գնալով Մեսրոպին ասում էր.

— Չին խոտհարքը տրորում է, Մեսրոպ։ Թշնամու չի, իմ ու քո խոտհարքն է, ես ու դու պիտի մտածենք մեր ձմեռվա մասին, մեզ ուրիշ կառավարիչ պետք չի, երեխա չենք՝ մեծ մարդիկ ենք, ամոթն էլ լավ բան է...— Խոսելով-խոսելով հեռանում էր, ու խոսքին էլ՝ արանք չկար, ձայնն էլ գնալով ցածրանում էր։ Վերջում ձայնը, քանի որ միզում էր, փոխանակ կտրվելու, այնպես բարձրացավ, ասես կողքներիս էր.— Հայկանուշ,

Հայկանուշ, Պայծառին ասա երեխային ուղարկի էն թամքը...— Հա, ուրեմն սա Մեսրոպին չէր վերաբերում։

— Լևո՛ն,— շշնջաց Մեսրոպը, բայց իր ձայնը ինքն էլ չլսեց։

Շոգ ուրթում, բաց արևի տակ մենք այդպես կանգնած էինք, ոչինչ չէր լինում, ոչինչ չէր պատահում, և մոլորված Մեսրոպն ասաց.— Բա հիմի ես ի՞նչ անեմ։— Ոչինչ չէր շարժվում, ոչ ոք չէր օգնում, Լևոնն ասել էր երամակը խոտհարքը տրորում է, բայց երամակն էլ չէր երևում։ Մեսրոպի փայտացած մարմինը տեղից շարժվեց, բայց թե դեպի ուր՝ ինքն էլ չգիտեր։ Հետո այդ մարմինը հանկարծ կոտրվեց ու գետնից առավ հրացանը։ Նա հրացանին այդպես նայում էր, ինձ թվում էր նա հիմա էլ հրացանին նայելով է ասում «բա հիմի ես ինչ անեմ», հետո հրացանի փողից երկու ձեռքով բռնեց, թափ առավ ու շպրտեց-շպրտվեց։ Հրացանը և ջարդվե՛ց, և պայթե՛ց, երկուսի ձայնը միասին ելան։ Շոգ փարախում ալարելով մի շուն հաչեց՝ այդ էր, քառասուն շնից միայն մեկը հաչեց։ Իսկ նրան թվում էր ռումբ է պայթեցրել, աշխարհի բոլոր շները վեր թռան ու կաղկանձյունով իրար խառնվեցին։ Նա փռվել էր գետնին ու կարծում էր ինքը հսկա է, վիթխարի՝ փլվել է ու անօգնական է, ու ողբերգություն է լինում— իր կտրիճի առջև թշնամին աներևույթ է, ու իրեն քար է պետք, քարայր է պետք՝ փակվի մնա մեջը մինչև՛ կտրիճների ժամանակներ, Ագռավու քար է պետք։

Չէ՛ մի։ Վաթսուն տարեկան մի մարդ՝ ձիապան, մեկ մետր յոթանասուն սանտիմետր հասակով, գլխին ականջավոր գլխարկ, նիհար ու խազխզուտ պարանոցով, ոսկրուտ դեմքը մազակալած, այո, գլխարկի ճակատին բանակային աստղի տեղը՝ բերանքսիվայր ընկել էր խոտերի մեջ ու կանաչներ էր պոկոտում, բանակային կոշիկների քթով խփում էր գետնին։ Մի քիչ ավելի հեռվից՝ նրա շարժումները չէին երևա, գուցե նստած ոչխարի, պառկած շան, խոտերի մեջ ընկած քարի տպավորություն աներ։

— Հիմար շանորդի,— խղճահարվելով ու զզվելով ասաց վարիչը,— դե հիմա էլ փող գտիր, պետական հրացանի դիմաց

մուտք արա հաշվապահություն։ Իրր խելք ուներ, եղածն էլ տարավ սիբիրներում թողեց եկավ։

Երեկոյան, երբ տավարը դռներին կուշտ որոճում էր, ձին ու ոչխարը փարախավորվել էին և հոգնած սարվորը վրանների արանքում սևացող մթան մեջ հանդարտ ծխում էր ու ալարում զրուցել,— Լևոնն անհանգիստ էր։ Ձեռները քամակին էր դնում՝ իբր թե շատ լավ էլ հանգիստ է, բայց չէր կարողանում այդպես մնալ, ծնոտը դողացնելով ձեռներն առաջ էր գցում։ Երբեմն նայում էր Մեսրոպին, բայց ավելի շատ ուզում էր չնայել։ Նա իրեն զսպեց, հրացանի մասին բան չասաց՝ մինչև կինը կանչեց հացի։

— Մթնոտ գիշեր է, քեռին կարող է գա,– տուն մտնելուց առաջ ասաց նա։

Երբ մութը թաղիքի չափ թանձր էր լինում, օդը բուրում էր սառը խոնավությամբ և զգում էիր, թե ինչպես է ներքնի անտառներից բարձրանում մառախուղը ձորակներն ի վեր և ներծծվում շորերիդ, մազերիդ, ոչխարի բրդին ու տամկացնում ձեռքիդ ծխախոտը,— ձորի անտառներից մառախուղի հետ փափուկ ոտ փոխելով դալիս էր արջը՝ կարմիր վառվող աչքերով։ Շները փշաքաղվում էին, ոչխարը խախալ-խախալ էր գալիս փարախի մեջ, պտտվում-պտտվում էր ու հեղեղի կես պոկվում դեպի անհայտություն, հովատակն ականջները սեղմում էր վզին, վիզը պոկելու չափ ձգում ու փռռացնում, ու փռռոցից ռունգերը պատռվում էին։ Վրանի մեջ մի թախտի քնած երեխաները սեղմվում էին իրար։ Վրանի թաղիքների միջով լսվում էին դրսի բոլոր ձայները։ «Տարա՞վ։— Բա կթողնե՞ր։— Հայ անտեր մնա դա, անտեր»։

Հրացանի մասին խոսեց ինքը՝ Մեսրոպը։— Այտա, Լևոն։— Նա երկար ծանրութեթև էր անում մտքի մեջ, այդ պատճառով էլ կանչեց շատ միանգամից, բարձր ու նեղացածի պես։— Այտա, ասիր ու գնացի՞ր, Լևոն։

Նա ներսը հաց էր ուտում ու խոսխսում էր կնոջ ու թոռների վրա, թոռներն աղմկում էին, և նա չլսեց Մեսրոպին։

— Այտա, Լևոն։

— Մի ճաշ եփել է՝ կարգին եփիր, էս ինչ լափ ես սարքել, ուշքդ էդ ո՞ր ջահելի ետևից է թռել, քանի մեծանում էնքան ետ է կծկում տնաշենը։ Հը, ո՞վ է։ Մեսրո՞պ, ի՞նչ կա։

— Այտա, ասիր ու գնացի՞ր։

— Բա ի՞նչ էի անելու,— ասաց։

— Մի հրացանից-բանից տայիր, այտա։

— Տվել էի, ո՞ւր է,— ասաց և գդալը ձեռքին, ականջը պատասխանի՝ Լևոնն սպասեց։ Դրսում երկար լռեցին, և Լևոնը դեմքը ծռմռելով չարացած բարձրաձայնեց.— Հը՞,— Մեսրոպն ամաչեց կրկնել խնդրանքը, և Լևոնր հայհոյեց ու շարունակեց ուտել։ Լսվում էր, թե ինչպես է չխկչխկում գդալը ցինկե ամանի մեջ և թե ինչպես, վերջում, ետ հրված ամանը կպավ ուրիշ ամանների։— Ցնդա՛ծ բանաստեղծ։

Վրաններից դուրս սահող մշուշոտ ճրագալույսերի մեջ Մեսրոպը երևաց ու կորավ։ Նա այնտեղ մթան մեջ խարխափելով փնտրում ու փնտրում էր, չորեքթաթ լիզում էր գետինը, հետո, շատ հետո, երբ ես մոռացել էի նրան, հրացանի կտորները ձեռքին մտավ դեղին լույսերի մեջ։ Ապա նստել էր ու ֆսֆսոցով իրար էր բերում կտորները, բարակ պղնձալարով փաթաթում էր։

Նա շաղված մարդ էր։

Հի՛ն հներում, Մեսրոպից առաջ, զրույցներո՛ւմ, դաշտեցիները հայ և Ղազարի Ավետը դաշտեցի էին սպանել։ Հետո Ղազարի Ավետն ամուսնացել ու ունեցել էր Մեսրոպին։

Ալփառւտեցի Բայրամն ու Ղազարի Ավետը կատակել էին, իրար ձեռ էին առել, ապա խաղը դարձել էր փետակռիվ։ Խանչալը քաշած՝ նա վրա էր վազել, Ավետիքը հրացանը

գետնից առել ու դեմառդեմ տվել պատռտել էր նրա փորը: Սպանվածի ազգականները մի շաբաթ հետո, մեկ էլ մի յոթ-ութ տարի հետո կրակեցին Ավետի վրա՝ բախտը բերեց: Նրանք՝ Ավետիքն ու Բայրամը, հետո անպայման կզղջային վեճի ու կատակի համար, բայց նրանց բանը վատ դասավորվեց: Իրար մասին ամեն ինչ գիտեին և մի րոպեում շպրտեցին, թե նրա քավթառ հերը ութ կնիկ է պահում, — Հորրդ չես օգնո՞ւմ,— թուրքն էլ թե՝ տուր թող մորրդ էլ պահի, որբևայրի կնիկ է: Չէ, նրանց բանը շատ վատ դասավորվեց: Այդ րոպեին մոտները դանակ էլ կար, մահակ էլ, հրացան էլ — դժվար էր ձեռքր խանչալին չգցել: Հետո Ավետըքին հարցնում էին, թե էդ ո՞նց եղավ, ասում էր լավ չհասկացա: Ավետիքն անքնությամբ հիվանդացավ, ասում-խոսում էր, ծիծաղում էր, հասկանում էր, ձի էր թամբում կարծես երազի մեջ: Նրա ականջի տակ գնդակ բզզաց, բայց նա գլուխն էլ չթեքեց նայելու, թե որտեղից էր, ինչ էին ուզում: Իսկ այդ կրակողները քսան տարի համառորեն շարունակում էին և չհանգստացան՝ մինչև չառան Ավետըքի դանդաղած, սևացած, մեռած արյունը:

Ջրաղացից գալիս, նրանք ծառի ստվերից դուրս եկան սպիտակ, շոգ ճանապարհ ու ժպտացին մի տարօրինակ ժպիտով: Բեռնած ձին կապեցին թփից, հորն ու որդուն հանեցին ճանապարհից ու տարան արահետով: Տաք, սպիտակ օր էր, օդը թեթև մեղրահոտ էր բուրում: Շուրջը խմճվել էր մեղվի համերգը: Թվում էր մեղվի երգը թանձրանում ու ծանրանում է, մեղվանոցր մոտերքում մի տեղ է ու գնալով ավելի է մոտենում: Եվ պիտի հայի պահակ շունը, և փուքսր ձեռքին մեղվապահը պիտի հարցնի միամիտմիամիտ. «էյ, էդ ո՞վ եք, ուր եք տանում էդ մարդկանց»: Չէ, գյուղր մի բլուր ու մի ձոր դենն էր: Բոլոր հանդերր հիմա լիքն են մեղուներով, աշխատում են:

Ձին ետևներից խրխնջաց:

— Ո՞ւր եք տանում,— կանգնելով՝ թուրքերեն հարցրեց հայրը:

— Ավետիքը դու չե՞ս։

Հայրը նայեց, նայեց, հետո բարձրաղիր ուսերը կարծես զրկվեցին հենարանից, ուսերը կախվեցին և դրանից վիզը երկարեց։

Նա, որ կարմիր խաչով կլոր փափախն ունքերին էր իջեցրել և հագին բարակ ներբաններով փափուկ երկարաճիտներ էին ու քայլում էր փափուկ ոտփոխով, քմծիծաղի պես արեց։ Երեխան դրանից հետո գնում էր կախարդվածի նման, աչքն այդ թուրքի դեմքին և վախենում էր, թե նա կտեսնի իր նայելը։ Մի անգամ էլ գլուխը ետ թեքելով, հայրը շշնջաց կարծես մեկուսի.

— Չին մեղք էր, կապած թողինք։

Տարան, տարան, հետո Ավետիքը նայեց երեխային, տեսավ երեխային, հետո նայեց երկարաճիտ փափուկ կոշիկավորին, ասաց.

— Էդ՝ փափախըդ Թիֆլիսի բազարիցն է՞ս առել։

Թուրքը ծամածռելով ուշունց տվեց, և Մեսրոպը հոր դեմքին հիմարավուն ժպիտ տեսավ։ Հետո Մեսրոպը նորից տեսավ այդ հիմարավուն ժպիտը և լսեց հոր խոսքը.

— Էդ կոշիկներիցդ Ալփաուտա մեր դոստում Մուստաֆեն էլ ունի, թե՞ հենց նրանն են, երկու օրով հագել ես։

Թուրքը հրացանի փոկը ուսն անցրրեց, ետ ծալեց չուխայի լայն թևքը, մի անգամ էլ ետ ծալեց, հենց քայլելիս էլ հարմարվեց Ավետրքի կողքին ու բաց ափով շեղակի խփեց նրա վզին։ Հայրը գայթեց ու գնաց կուզեկուզ փութով, կարծես հավ էր բռնում, և արահետի տակ ծնկեց գլուխր կրծքին։ Մեսրոպը լռիկ լաց եղավ՝ աչքը փափախավորի ձեռքին։ Մեսրոպն արցունքները ետ էր տալիս, արցունքները սակայն նորից պղտորում էին տեսածը։ Շրջապատած, կանգնեցին հոր գլխին, հետո փափախավորը կոշիկի թաթով հորն օգնեց կանգնելու։

— Դե գեթ, գեթ, ման օլում, մենք էլ գործի տեր ենք, մեզ ուշացնում ես։

— Մեսրո՛պ,— ասաց հայրը,— չեմ տեսնում, Մեսրոպ։

Հիմա, երբ փափախավորը ժպտյում էր և թվում էր անելիքներն այլևս արել են ու գնում են՝ Մեսրոպը հեկեկաց:

— Բա էդ երեխային...— հայրը խոսում էր քթերի մեջ, կարծես կիսաքուն-կիսարթուն էր,— բա գետինը չե՞ք մտնում, ամոթ չի՞ բա:

Կզակի մազը չալված թուրքն ասաց, որ երեխային ոչինչ էլ չի պատահի, իրենք իրենց ձեռքով կհասցնեն գյուղի տակ, բայց Ավետիքը հիմա իրոք անզոր էր նրանց դեմ և կպել ու պոկ չէր գալիս երեխայի մասին խոսելուց: Նա գիտեր, որ լուրը գյուղ շուտ չհասնելու համար են երեխային վերցրել, բայց սրանց մտադրության մեջ հիմա չէր գտնում այն վատը, որ արժանի լիներ բողոքի, հայհոյանքի, արտասուքի, և երեխայից էր խոսում: Նա ինքը իրեն վտուց էր դատապարտել այս օրվան: Նա ապա շուտ եկավ նրան՝ քսան տարվա մեռելին, նրա սաղուսատկածին, նրա գյոռին: Հեռու արահետի տակ երևացին բարձր ու խիտ բանջարկուտով հին գոմատեղերը, և Ավետիքը հանկարծ լռեց ու դանդաղեց, նրան հիմա հրելով էին տանում: Հետո Ավետիքը քայլեց արագ, ետևից հազիվ էին հասնում, ու կանգ առավ գոմատեղերի մոտ: Ինչի՞ց որոշեց, ինչի՞ց հասկացավ, որ իրեն այդտեղ են սպանելու: Ոչնչի չէր նայում, և վիզը հիմա այնպես երկար ու բարակ չէր: Աչքերի գույնը փոխված էր և նեղ շրթունքները կիպ կպած էին:

Կզակը չալ թուրքը երեխային մի կողմ տարավ ու իրենով նրանց ծածկեց երեխայից: Եվ ձեռքը երեխայի գլխին՝ նա հարցնում, պատասխան չէր ուզում և դարձյալ հարցնում էր, թե նա քանի տարեկան է, մեծանա՝ ինչ է դառնալու, տանը լա՞վ են ապրում թե վատ, և խոսքումջ խորհուրդ էր տալիս ինջիներ դառնալ Թիֆլիս քաղաքում: Երեխան նրանից փաղաքշվել էր ուզում և գլուխը հենել էր նրա փորին, գոտու ճարմանդին: Նրանից բրդի ու ոչխարի կաթան խառն հոտ էր գալիս, և դա հարազատ էր: Երեխան զգում էր, որ նրա թիկունքի ետև մի վատ բան է լինում և սեղմվում էր այդ չոբանին: Հետո նրա թևի

տակով, թե սպիտակ օդում տարօրինակ մի ցոլք խաղաց, երեխան փափախավորի ձեռքին տեսավ շողշողուն դաշույնը, և հոր քուրքը թռավ դեպի այն երկուսը, և չոբանը երեխայի բերանը սեղմեց, կարծես ուզում էր մորթել: Իսկ հայրն օդում էր, բանջարների գլխին, ապա բարձր բանջարները կեռմաններով շարժվեցին, և մյուսը փափախավորին հայհոյեց ու կրակեց: Կրակելուց հետո մի անդամ էլ հայհոյեց: Բանջարկուտի խորքում եղինջներն արագ խառնվեցին, ճոճվեցին հանգիստ ու կանգնեցին բարձր, ուղիղ: Նա, որ փափուկ երկարաճիտներով էր, դանդաղ նշան դնելով մի անգամ էլ կրակեց եղինջների մեջ:

Հետո նրանք փակեցին փակաղակները, մի պահ կանգնեցին մոլոր, մյուսը փափախավորի դաշույն հանելու մասին նորից հայհոյանքով խոսեց և փափախավորը մեղավոր ժպտաց, կզակը չալ չոբանը տնքալով կռացավ, վերցրեց Ավետրքի քուրքն ու ետ եկան: Չոբանը շոյում էր երեխայի գլուխը, սփրթնած փափուկ կոշիկավորը չոբանին մի բան ասավ, և չոբանի ձեռքը երեխայի վզին ծանրացավ:— Յոխ,— ասաց չոբանը և հետո գլուխն օրորեց,— յոխ, յոխ:— Մյուսն ընդհատ-ընդհատ նայում էր երեխային: Երեխան այդ զգում էր ծոծրակով, երեխան սիրտ չէր անում նայել նրան և հպվում էր չոբանի կոնքին:

Ետևի մի ոտը թուլացած՝ ձին սպասում էր բեռան տակ: Երեխայի սիրտը փուլ եկավ, երեխան փաթաթվեց չոբանի ոտին ու հեկեկաց:— Ման օլում, հայի տղա, լաց մի լինի, թե չէ կչարանամ,— ասաց փափուկ կոշիկավորը, և երեխայի սիրտը կանգ առավ: Նա, որ կրակել ու խանչալի համար հայհոյել էր փափուկ կոշիկավորին, ժպտալով ասաց.— Կչարանա, լաց մի լինի:

Չոբանը ձին քաշեց ճամփա և երեխային դրեց բեռների մեջ:— Գնա:— նա ձիու սանձը կապեց թամբին որպեսզի ձիու ոտի տակ չընկնի և նորից ասաց.— Գնա: Մենք էստեղ կանգնած ենք, մի վախեցիր, գնա:

Գյուղը երեխայից խլեց լուրը և լուրի հետ՝ վախն ու խղճահարությունը: Գյուղը հորը խլեց երեխայից: Երեխան դարձավ սպա-

նության ականատես։ Հերոս։ Նշանավոր։ Պատմել էին տալիս սկզբում մեծերը, և երբ բոլոր մեծերը մանրամասն առ մանրամասն ծայրից ծայր գիտեին Ավետիքի սպանությունը, նա պատմում էր հասակակիցներին։ Այդպես պատմելով էլ մեծացավ։ Այն երեքն արեցին շատ վատ բան — երեխային վերցրին դրին հետաքրքրասերների կենտրոնում, և նա չունենալով, չէ, ժամանակ չունեցավ նայելու իր ներսը, զբաղվելու իրենով։ Երբեմն նրա դեմ մշուշի մեջ կանգնում էր ուսերը կախ հայրը, պարանոցը շատ բարակ ու երկարած, բայց այդ երեխան այլևս կարողություն չէր ունենում խղճալու այդ պահի հորը։ Շունչը կտրվելով պատմում էր «հետո քուրքր շպրտեց, հետո քուրքն ընկավ հրացաններին, հետո թռավ, հետո» և չէր հիշում թե ամռան այդ շոգին քուրքն ինչու էր հոր վրա։ Դողէրոցքով հիվանդ էր, ա՛յ թե ինչ էր անում քուրքը հոր հագին։ Դողէրոցքի մոծակը Բորչալու կալ անելիս կծել էր, դողէրոցքը որ բռնում էր՝ աչքերը չռվում էին, մտնում էր անկողին, ինչքան շոր կար վրան էր քաշում ու դողում էր, դողում էր։

Հազար ինր հարյուր երեսուներկուսին, երբ Մեսրոպը քսան-հինգ-երեսուն տարեկան էր, շոգ դաշտեցիները մերոնց համաձայնեցրին, նախահանրապետական սովորությամբ, ամառները ոչխարը դաշտից հանել մերոնց սարերը։ Մեր դաշտերն էլ, ասացին, կերից նեղ տարի կունենանք՝ ձեզ ձմեռանոց։ Երեսուներկուսի ամռանը, կտրված գնալ-գալուց հետո առաջին անգամ, նրանք հոտերը քշեցին Ծմակուտի միջով։ Բջջի Լևոնը գյուղի տակ ճանապարհի կողքերին սյուներ տնկել տվեց ու սյունից սյուն կարմիր պաստառ ձգեց — ԱՋԻՋ ԴՈՍՏԼԱՐ ԽՈՇ ԳՅԱԼՄԻՇՄԻՆԻՋ,- և դպրոցի ամբողջ աշակերտությանը դուրս բերեց կանգնեցրեց ճանապարհի կողքերին, որպեսզի պիոներները և կոմերիտականները ոչ մի ուլի և ոչ մի գառան չթողնեն պաստառի տակով չանցնել։ Լևոնը շատ չարչարվեց փողային նվագախումբ հավաքելու վրա, և նրան այդ գործի կազմակերպման մեջ լավ օղնեց Հովըտի Խաչիկը՝ որ

Հովըտից երեք ու Շամուտից երկու շեփորահար էր ուղարկել, այդպիսով դասավորվել էր էսպես մի յոթ հոգի: Լևոնը իր կաղ աներոջն էլ խառնեց դպրոցականներին՝ որ նրանց շեշտով դհոլ խփի և սա, ոչինչ, լավ հարմարվեց,– մի խոսքով կարգին նվագախումբ էր, բայց հոտը խրտնում էր: Շեփորի առաջին կանչի հետ հոտը խախալվեց իր մեջ, պտույտ տվեց, պտտվեց ու մեկ էլ փախս ընկավ: Լևոնին էլ իր մեջ վերցրեց ու տարավ, և դեռ շատ կգնար Լևոնն այդպես ոտքերը տնկած, բայց հոտը ցանցառացավ, բաժան-բաժան եղավ, և Լևոնն ընկավ: Նրանց չոբանը եկավ Լևոնին ասավ.— Ա՛դուստում, շատ ենք շնորհակալ, բայց առանց նվագի էլ շնորհակալ ենք:— Լևոնն ասավ,— Քու գործը չի:

Լևոնը կարծում էր մեղավորը շեփորահարներից որևէ մեկն է, որ պահանջվածի պես չի փչում, բայց լավ չէր հասկանում, թե հատկապես ով չի փչում պահանջվածի պես և լռեցրեց Մեսրոպի եղբոր տղային, որի խժբժան աչքերից լավ էր երեում, որ նա դեմ է հայ-թարք ժողովուրդների բարեկամությանն ամբողջ աշխարհում: Բայց ոչխարը դարձյալ խրտնում էր, և նա աներոջը շարքից հեռացրեց, հետո մեկ առ մեկ լռեցրեց բոլորին, և ոչխարն անցավ ԽՈՇ ԳՅԱԼՄԻՇ–ՍԻՆԻՋ ԱՋԻՋ ԴՈՍՏԼԱՐ կարմիր պաստառի տակով: Լևոնը կես րոպեն մեկ կոչ էր արձակում. «Կեցցե ժողովուրդների բարեկամությունն, ուռա», «Կեցցե բանվորա-գյուղացիական մեր հզոր Կարմիր Բանակն, ուռա», «Կեցցե ընկեր Տուխաչևսկին, ուռա»:

— Ուռաաաաա,— զիլ ծղրտում էին դպրոցականները:

Լևոնը, այո, մեծ կազմակերպիչ էր, մանավանդ առաջին տարիներին շատ մեծ գործ տեսավ: Եվ ընդամենը Մեսրոպի տարիքին էր, տարեկիցներ էին, Ծմակուտի դպրոց՝ հետո՝ Հովըտի դպրոց մի երկու տարի միասին էին գնացել:

— Մեսրոպ,— կարգադրեց Լևոնը,— ձի նստիր, մեր էս բարեկամներին տար սարը հասցրու, քեզ ուղեկից եմ նշանակում:

Մեսրոպը չասաց «հենց հիմա»:

— Կկարգադրեմ երեք աշխօր կգրեն,– ասաց Լևոնը:

Մեսրոպը չէր խոսում։

— Ես կուղեկցեի, բայց ձիանոցի բացմանը ներկա եմ գտնվելու, Մեսրոպ, իմ փոխարեն։ Իմ ներկայացուցիչն ես, Մեսրոպ,— գովեց Լևոնը։

Բայց Մեսրոպը կողքին չէր։ Ավելին՝ մոտերքում էլ չէր։ Այո, ուրեմն այդ եռուն օրերին Լևոնը սովոր էր, որ ով իրեն պետք լինի՝ կողքին կանգնած լինի, և կարգադրություններ ու առաջարկություններ էր անում կատարողներին չնայելով։ Գիտեր, որ այդ կարգադրությունները կարևոր կարգադրություններ են և գետնին չեն ընկնի, մեկնումեկը կբռնի օդում։

— Մեսրոպ, ինքնագլուխ՝ ինչո՞ւ կողքիս չես,— ասաց Լևոնը։

— Մեսրո՛պ,— զայրացավ Լևոնը։— Թու, ես քո մնացորդ,— հայհոյեց Լևոնը և հանկարծ հասկացավ, թե ի՞նչն է իրեն ջղայնացրել։ Լևոնը ձին քշեց Ղազարենց դուռը։— Ո՞ւր է։

Այրին ասաց, որ Մեսրոպն առավոտվանից տանր չի, չգիտի ուր է։

— Ձեր հրացանը մի դուրս բեր տեսնեմ,— ձիու վրա ձեռքը կոնքին՝ ասաց Լևոնը։

Այրին ներս մտավ, դուրս եկավ ու ասաց, որ պատի մեխին հրացան չկա։

— Թո՛ւ, ես քու դաշնակցական։— Լևոնը ձին չոտատելով տարավ կարճ ճանապարհով, քարերը տակից փախցնելով՝ լանջի քարքարուտների միջով, լողաց անցավ արտերը, մտավ անտառ։ Խաշամը համաչափ խշրտում և րոպեումեջ շխկում էր մտրակը։ Ավելի կարճ ճանապարհը Շեկ յառանդների ճանապարհն էր, բայց Շեկ յառանդների ճանապարհին մի փոքրիկ խայտառակ պատմություն էր թաքնված,— Լևոնը խփեց ու շեղակի դուրս եկավ Հին խաչքարեր, ապա Գեղատեղերի գլխով դուրս եկավ Թախտեր։ Թախտեր չելած՝ լանջին ցատկեց նժույգից, ձիու ոտները սանձով խճճեց ու ինքը գնաց կուզեկուզ վազքով, ասես խոճկոր էր բռնում։

Ժայռի նեղ ծերպում, ծալված, հրացանը ծնկներին՝ Մեսրոպը պապիրոս էր շինում։

— Հլա,— հևաց Լևոնը,— չի էլ ամաչում՝ հանգիստ ծխում է։

— Ի՞նչ է, Լևոն,— տակնիվեր նայեց Մեսրոպը։ Լևոնը կանգնել էր ծերպին շեք-տված, տակփոխ երկարաճիտները դրել էր մեկը ծերպի մի պռնկին, մյուսը՝ մի, և գալիֆե շալվարի շեքը ձգվել պատռվում էր։ Ոտքերի տակից Մեսրոպի աչքերը նայում էին բոլորովին սառը, և սև ունքերի տակ աչքերը լիքն սպիտակուց էին, և Մեսրոպի մատները թղթի վրա թութուն էին տրորում բոլորովին հանգիստ։ Եվ Լևոնն ասաց ակամա ծիծաղելով.

— Լուրջ-լուրջ էլ հարցնում ես։

Մեսրոպը լիզեց թուղթը, բայց թուղթը չթրջվեց։ Մեսրոպը նորից լիզեց, բայց լեզուն բերանում ցամաքել էր, և թուղթը թղթին չէր կպչում։— Գնա, Լևոն,— ներքևից վերև ասաց Մեսրոպը։

— Որ չգնամ՝ ի՞նչ կլինի։— Լևոնը ժպտում ու հասկանում էր, որ վախից է ժպտում։

Մեսրոպը ձեռքը հրացանին տարավ։

— Ու անհարմար էլ չես զգա, չէ, չես զգա, չէ։

— Գնա, ձենդ գլուխդ մի գցիր։

Լևոնը դեմ չէր, համաձայն էր հեռանալուն, այնքան որ մի հիմարության վրա մի հիմարություն էլ չավելացներ Մեսրոպը՝ չկրակեր Լևոնի վրա, բայց Լևոնի վախը հոգու խորքերում արմատներ չուներ։ Լևոնը Մեսրոպից հիմա վախենում էր այնքանով, որ նրա ձեռքին հրացան կար, հրացանի փակաղակը բաց էր։ Իսկ հրացան՝ Լևոնը շատ էր կրակել, գիտեր քանդել-հավաքել և որ վառոդը թաց եղավ՝ փամփուշտը չի պայթի, պայթելուց հետո էլ եսիմ, ընդամենը արճիճ է, էլի։ Լևոնն արճիճ շատ էր տեսել։ Մեսրոպի մեջ Լևոնին անհայտ բան չկար։ Նրանք երկուսով, երբ տասնհինգ–տասնվեց տարեկան խոզաբուծ լակոտներ էին, սարի ճամփին Շեկ յառանդներում կանգնեցրին Հոտած Նիկալի կնկան։ Հոտած Նիկալի կնիկը կարծեց պանիր են ուզում ձեռքը տոպրակին տարավ, բայց մեկ էլ հո չկարմրեց։ Շփոթված նայեց մեկ սրան, մեկ նրան ու ջղային-ջղային գնաց իր ճամփան։ Իսկ նրանք վազում էին նրա

կողքերից և վիզները ծռած խնդրում էին կարծես երկու կարտոլ, մի խնձոր կամ մի կտոր հաց։ Նիկալի կնիկը, ճիշտ է, ձեռքի տոպրակը ցած դրեց ու ճանկելով՝ տվեց սևացրեց Մեսրոպի աչք-մաչքը և քարով՝ փախչող Լևոնի ծոծրակին, բայց նրանք հիմա էլ հեռվից էին գնում ճանապարհի երկու կողմով վիզները ծռած, խոստանում էին նրանց խոզը պահել խոտը հավաքել ձեռքի բեռը տուն հասցնել։

— Ախըր հիմի ի՞նչ է դուրս գալիս, Մեսրոպ,— ասաց Լևոնը ոտներից մեկը ծերպի մի շուրթին, մյուսը՝ մի։

— Նրանք իմ հորն սպանեցին, Լևոնս

— Նադրրի տարվա բաները, Մեսրոպ, ինչի՞ ես մեր նոր կյանք...

— Իմ հորն են սպանել, քու հորը չեն սպանել, Լևոն, գնա։— Զսպանակվելով՝ Մեսրոպը կանգնեց, իրենով լցրեց ծերպը։— Դե գնա՛, ես քու,— և հրացանով հրեց Լևոնի ծունկը։— Գնա՛։ Եկել վերահսկիչի պես գլխիս տնկվել է թեթև լակոտը։ Չի է նստել, ղեկավարում է։

Լևոնը հեռանում էր և չէր նեղանում հայհոյվելուց։ Մեսրոպի հորն իրոք սպանել էին։ Եվ Լևոնի ինքնասիրությունը չէր վիրավորվում։ Իր ձեռքին եղած-չեղած մի մտրակ էր, նրա ձեռքին հրացան։ Բայց մի բան, որ հունցվում ու հունցվում էր Լևոնի մեջ, թույլ չէր տալիս հենց այնպես ձեռները թափ-տալով վերադառնալ՝ ամաչում էր։ Այնքան էր ամոթ, որ ձիուց էլ էր ամաչում։ Այդ նժույգը, շրջկոմի թաքուն ստիպմամբ, նախագահի տակից հանել ու քաշել էին Լևոնի տակ, և հիմա, ձին տեսնելուց հետո, տրորվելով մտքի հստակության ու պղտորության միջև, Լևոնը կանգ առավ։ Ապա միանգամից շուռ եկավ ու, փափուկ ու հավաք վազելով, ցատկեց ծերպը։ Այդ ցատկն ինքնիրեն եղավ, այդպիսի թափով՝ ծերպի պռնկին կանգ առնելը դժվար էր, ուղղակի անհնար էր։ Լևոնը, ճիշտ է, հետո պատմում էր, որ ինքը որոշեց և վազեց և ցատկեց, բայց սուտ էր պատմում։ Ինչպես բոլոր մարդկանց, Լևոնին նույնպես թվում էր, թե իր կյանքը իր որոշումների իրագործումն է եղել։

Լևոնը կարծում էր դեռ վազում է՝ ծերպ էր խցկվել: Այդտեղ ամեն ինչը ինքնիրեն եղավ, ինչպես ինքնիրեն էր ծերպ ցատկելը: Մի քիչ գոմռոցից հետո Մեսրոպի ձեռքերը քամակին կապած էին, Լևոնի ուսագլխին հագուստն ու մաշկը քրքրված էին, բայց այդ ամենն այնքան միանգամից եղավ, որ արյունը դեռ չէր հասցրել կարմրացնել քրքրվածը: Լևոնի ակնակապիճը ուռչում ու կամաց-կամաց փոքրացնում էր արյուն լցված աչքը, Լևոնի քիթը հաստանում ու տոգում էր, ասես պարկի մեջ պանիր էին բթում, և Լևոնի ծունկն այնպես չէր ծալվում, ինչպես ծերպ գլորվելուց առաջ: Հրացանը Լևոնի ձեռքին էր և հրացանի փողը երբեմն քերծում էր Մեսրոպի գոտկատեղի չոր ոսկորը: Լևոնը գնում էր ձախ ձեռով գալիֆեն բռնած և զարմանում էր, թե ինքն այդ երբ հասցրեց նրա ձեռքերը ծնկով ու մի ձեռով մեջքին սեղմած պահել, մյուս ձեռքով արձակել, քաշել, հանել իր գոտին և կապել, պի՛նդ կապել նրա ձեռքերը: Լևոնն արդեն սկսել էր զարմանալ իր արածի վրա: Այդ զարմանքը քանի գնաց ուռավ, և տարիներ հետո միայն զարմանքը կար, բուն դեպքը մոռացվել էր: Տարիներ հետո իր արածը շատ կարևոր էր համարում և արարքի կարևորության հետ իր անձի կարևորությունն էր ներծծվում Լևոնի գիտակցությանը, և նա վախենում էր անցած-պրծած ցատկի համար, տրորում էր ուսն ու ծունկը և մտածում, որ հիմարություն էր արել կյանքը վտանգի ենթարկելով: «Պիտի մի երկու ջահել ուղարկեի՝ ծեծելով բերեին»:

Հիմա, երբ ձեռքերը կապված էին, աջի ամբողջ թաթը մանր ծակծկոցով այրվում էր և հրացանի նշահատիկն անընդհատ քերում էր մեջքի նույն ողը, Մեսրոպը կարծում էր քսան տարի սիրտը մխացել է հոր վրեժով և իր արդարությունը հիմա կոխկրտում են, և Մեսրոպն իրեն խղճում ու լաց էր լինում: Արտասուքների տաք հպումն այտերին՝ դուր էր գալիս նրան և

նա շարունակում էր գնալ արտասվելով։ Մի հիմար մի հիմարի մեղադրում էր մի բանում և սա հաճույքով էր մեղադրվում, որովհետև ոչինչ էր և ուզում էր լիներ որևէ բան։ Պատահականությունը պարապ երկու կերպարանքի դարձրել էր մեկին կապված, մյուսին կապող, և սրանք հիմա մտածում էին, որ իրենք կապվող ու կապող են կոչումով։ Հաճելի էր գիտակցել, որ երեկ Հոտած Նիկալի կնոջ կողքերով վիզները ծռած վագոնից իրենք դարձել են գաղափարակիրներ։

Թաթը ցավից պայթում էր, թվամ էր ամբողջ արյունը մամլվել է դաստակում և մաշկն այդտեղ բարակել է փառի չափ, ուղեղն սկսեց մանր ցոլանքով հալիլել,— Մեսրոպը կանգ առավ։ Լևոնը հրեց հրացանով, և Մեսրոպը ետ հրվեց, որպեսզի ողն ավելի տաշվի ու ավելի մրմռա։ Եվ պարանոցը կիսաողորած Մեսրոպն ասաց դեպի Լևոնը.

— Նրանք իմ հորն սպանեցին։

Լևոնը շտկվեց առողջ ոտի վրա՝ մի ձեռով բռնած հրացանն ու շալվարը։ Լևոնին ձեռնտու չէր հարցի այդպիսի նեղացումը, և հրեց.

— Գնա, դաշնակցականի մեկը դաշնակցական։

Եվ Մեսրոպը հասկացավ, որ ինքը նույնպես չէր ուզենա խոսել միայն հորից։ Պարանոցը կիսաողորելով՝ Մեսրոպն ասաց.

— Նրանք կործանեցին Անին, Մացոյի Լևոն։

Իսկ շուրջը լեռներ էին, ձորի բացատում գոմեր էին, իրենք շեղակի մոտենում էին աղբյուրին, մտնում էին աղբյուրի ձորակը, որտեղից ելնելու էին շեղակի, և երևալու էր ոտները սանձով խճճված ձին, հետո ծմակի պոռունկն էր երևալու, ներքևում կակաչի հովիտն էր, սարի բարձրությանը հավասար ձորի վրա արծիվը նույն գծով կտրում ու կտրում էր օդը շրջանաձև, և Մեսրոպն ու Լևոնը իրենք իրենց վրա սկսեցին ***ֆորձոն*** *տրակտորի տպավորություն թողնել։ Եվ ուզում էին*

ուրիշները նույնպես հասկանան, որ իրենք գյուղ նոր մտած ***ֆորձոն*** *տրակտոր են։*

— Դե իմ խոսքն էլ էդ է, էլի,— ասաց Լևոնը,— նացիոնալիստր հո պոզով-պոչով չի լինում։

Նրանց *ոչխարը ծմակից դուրս էր գալիս։ Լևոնն սպասեց մինչև բոլոր չոբաններն իրենց նկատեցին և տարազատվելով կապվածից՝ կոչ արձակեց. «Կեցցե արևելյան Ժողովուրդների բարեկամությունն ամբողջ աշխարհում, առա»։* ***Նրանք*** *արևից աչքները ձեռներով պաշտպանեցին ու նայեցին, իսկ Մեսրոպը ունքերը հավաքեց, ծնոտը տնկեց ու ընդառաջ գնաց իր թշնամիներին։ Նա հպարտ արհամարհանքով անցնելու էր, բայց այդտեղ մի սխալ եղավ, մի սարսափելի սխալ պատահեց։* ***Նրանք*** *շրջապատեցին սրանց, մի կտոր պարան տվեցին՝ որ Լևոնն իր շալվարը կապի,— Անհարմար է էդպես, ա բալամ, երեխա չես քամակդ բաց ման ես դալիս,— հետո նրա գոտին տեսան Մեսրոպի ձեռքերի վրա, արձակեցին, շպրտեցին Լևոնին՝ որ մեջքին կապի, և վրա-վրա խոսելով տնտղեցին Մեսրոպի ձեռքը։ Ասացին, որ թաթի բոլոր ոսկորներն իրարից ընկել են, Մեսրոպին պառկեցրին չոր գետնին, մի երկու պինդ չոբան նստեցին վրան՝ որ դեսուդեն չոլորվի ու փչացնի գործը, և խոշոր այտոսկորներով թուխ մի պառավ մսուտ ձեռների մեջ վերցրեց Մեսրոպի թաթը։ Պառավից ու բոլոր նրանցից ոչխարի կաթան ու բրդի խառն հոտ էր գալիս։*

— Ադա ա բալամ, էսքանն էսօրվա բանի չի ,— և պառավը ոլորեց ու հրեց Մեսրոպի բութը։ Եվ տեսնելով, որ բութը երկու տեղից է դուրս-ընկած, պառավը նորից ծործորաց։— է՛, ա բալամ, բա էսպես երեխություն կանե՛ն։— Պառավն ի վերջո չհամբերեց ու Լևոնին մեր հայհոյեց տղամարդու ուշունցով։ Եվ ճկույթը տնտղելով, հոդերն իրար հագնելու ճտտոցի հետ, պառավը պարգևատրեց Լևոնին.— Քյոռ հեյվան, տվել ախուջախ ես արել տղին։

Արտասուքը չորանում էր Մեսրոպի աչքերում և նա պարապ ուղեղով ունկնդրում էր ցավը։ Նա այդ պառավին չէր ատում, և

ոչ էլ նրանց, որ նստել էին իր վրա և ծխում էին: Ետևներից մի ձի քաշելով ու ձեռքներին մի հրացան, Լևոնն ու Մեսրոպը մտան անտառ, զրուցելով իջան, Շեկ յառանդներում լռեցին ու լուռ անցան, հետո ձիուց, պայտից, գութանից, գոմաղբից, Սիմոնի իշից խոսելով մտան գյուղ:

*Մի հինգ տարի հետո նրանք երեսուն-երեսունհինգ տարեկան տղամարդիկ էին: Այդ տարիքում ամեն ոք որոշակի մի բան լինում է, և Լևոնն իր մեջ կարծրացրել էր **ժողովուրդների բարեկամությունը**, իսկ Մեսրոպը դեռ գնդում էր **հայ, Անի, Լեո**: Մեսրոպը սովորում էր թվեր ու անուններ և հունցում ու դարձնում **Հայաստան**, ինչին որ խոլոր էր նայում Լևոնը և ինքը իրեն հիշեցնում, թե պետք է **զգոն** լինել: Լևոնը չէր թաքցնում, զգուշացնում էր և՛ լուր Մեսրոպի, և երեսառերես Մեսրոպին: Եվ իր մտքում Լևոնն արձանագրում էր, որ ինքն զգոն է բազմակողմանիորեն: Ոչ Լևո՛նն էր կորցնում զգոնությունը, ոչ էլ Մեսրո՛պն էր դադարում Հայոց պատմություն կարդալուց: Եվ իրարից գոհ էին, որովհետև իրարու գոյություն էին արդարացնում: Հետո գիշերով՝ որպեսզի գյուղը պանիկա չընկնի, Լևոնը պետանվտանգության աշխատողներ տարավ Ղազարենց հին տուն: Գործողությունը **կոնսպիրացրել** էր անձամբ ինքը և իրեն ասել, թե ես ահա **օպերացիան** կոնսպերացրի: Այն երկու ընկերը պիտի պահվեին դռների ետևը, ինքը պիտի ծեծեր դուռը: Շանը լռեցնելու համար Լևոնն անձամբ ինքը յուղի մեջ թաղիք էր տապակել, և խեղճ շունը ծամում ահա ծամում էր, ամբողջ գիշերը, երբ արդեն Մեսրոպին տարել էին, շունը դեռ ծամում էր: Խաբվեց միայն շունը: Մեսրոպն արթուն էր և սպասում էր նրանց, որոնք եկել էին իբր թե հողբաժնից. սեղանին Լեո ու հոր լուսանկարն էր դրել:*

— Ես եմ, Մեսրոպ, Լևոնն է, լուծը որտե՞ղ ես դրել, պետք է՝ չեմ գտնում։

— Լուծը վզիս է, Լևոն,— ասաց Մեսրոպը,— քեզ իմ գլուխն է պետք՝ գլուխս վրաս է։ Ու քանի իմ գլուխն իմ վրա է...— Մեսրոպը բացեց լուսամուտի փեղկն ու հրացանը պահեց։— Տղերք, ձեզանից ո՞վ է թուրք, թող առաջ գա։

Ասացին, որ իրենք երկուսն էլ հայ են, իրենց մեջ թուրք չկա։ Դե, Լևոնն էլ հայ ու հայ էր — Մեսրոպը հրացանը ետ քաշեց։ Նա նրանց համար պահարանի տակի դարակից, ամանների ետևից, հանեց լիտրանոց օղու շիշը, բայց նրանք ուրիշ բան էին փնտրում։ Եվ չէին գտնում, որովհետև չկար, չէր եղել։ Եղածը սեղանին էր՝ մի Հայոց պատմություն, աշխօրի գրանցման մի գրքույկ, և դեմները նստած Մեսրոպը, որ հանդարտ թարթում էր աչքերը։— Ի՞նչ եք ուզում, տղերք ջան, ինչ կամ՝ էս եմ, ձեզանից պահելու բան չունեմ, հայ եք, հո թուրք չեք։ Հայրենասեր եմ, տղերք ջան, ձեզանից ի՞նչ թաքցնեմ։

— Թուրըդ որտե՞ղ ես պահել,— քմծիծաղով հարցրեց Լևոնը, և այն երկուսր աշխուժացան, Մեսրոպր սփրթնեց։ Հրացան շատերն ունեին և հրացանի մեջ՝ լոբի ու նապաստակ սպանելու կոտորակ։ Իսկ թուրն արդեն լուրջ էր թվում հիշողությունների այն թաքուն թելադրանքով, որ թուրը եղել էր սպիտակ կազակների զենքն ընդդեմ մեր կարմիր բանվորների և Անդրանիկի զենքը թուրքերի դեմ։ Թուրն այդքան լուրջ էր թվում, մանավանդ որ՝ պատից կախված յափնջին ծածուկ հիշեցնում էր մոլեգին Չապան։

— Խանչա՞լը։ Ճիշտ, որտե՞ղ է խանչալս։

Տունը խառնեցին՝ խանչալը չկար։ Մատնահարում էին սյուներն ու պատերը՝ ստուգելու թե նրանք փո՞չ չեն, նրանցում զե՞նք չկա պահած։ Սյուներն ու պատերր փուչ չէին և խանչալն էլ չկար ու չկար։ Մեսրոպն էլ է մատնահարում սյուներն ու պատերը։ Քափ ու քրտինք մտան, բայց խանչալը չկար ու չկար։

*Լևոնն անկյուն տարավ Մեսրոպին, քչփչում էր և մոռացել էր **կոնսպիրացիա, ինտերնացիոնալիզմ, համաշխարհային, մասշտաբ, Քերզոնի հուշագիր**, կուչ էր եկել, դարձել էր գյուղացի մարդ: Եվ ամաչում էր, ինչպես ամաչում են թանկ հյուրի առջև դնելու մի երեսատեղի բան չունենալիս: Մեսրոպը նրան լսում էր ականջը բերանին դեմ արած և շուտ-շուտ ասում էր՝ հա, այո, լավ, հա, այո: Լևոնն ուրեմն Մեսրոպին ասում էր,— Ամոթ է, կենտրոնից ասել են Ծմակուտ նացիոնալիզմ կա, հիմի մենք կենտրոնին ասենք չկա՞: Մարդիկ քաղաքից վեր են կացել եկել մեր դուռը, հիմի դատարկ ձեռքով ե՞տ ղրկենք: Լեյտենանտ մարդիկ են, այ էն ջահելը լեյտենանտ է:— Հա, այո,— ասում էր Մեսրոպը, ապա ջղայնացավ,— ինչո՞ւ ես ինձ բացատրում, ես անհասկացո՞ղ եմ: Գտիր, գտնենք:*

Խանչալն ընկած էր մառանում, կաղամբի գլուխների մեջ: Անմեղ-անմեղ մտել էր արանքները, կարծես թուրն ինքը չէր, ու ժանգոտել էր, կարծես էլ չէր մաքրվելու ու կայծակի պես շողալու ժողովուրդների բարեկամության գլխին: Գաղամբը նրանով կոթատել ու այդտեղ էլ մոռացել էին: Մեսրոպը դրա համար կնոջը մի լավ հայհոյեց:— Ձենքը քու ինչ խելքի բանն է, տո հավի գլուխ, զենքի հարգը դու ի՛նչ գիտես: — Մեսրոպը տեղնուտեղը մաքրեց խանչալը, գտավ պատյանը և այդ կաղամբկտրիչից զենք սարքեց՝ որպեսզի մի կարգին իրեղեն ապացույց լիներ և Լևոնը շրջկենտրոնի առջև սևերես չմնար: Հետո ուրեմն պարզվեց, որ դա նշանավոր տարի է: Մեսրոպը համենայն դեպս այն արեց, որ Լևոնը տարիներ հետո ազատ կարող էր պարծենալ. «Իմ ամբողջ գիտակցական կյանքում մե՛ծ գործունեություն եմ ծավալել: Ինչե՛ր քաշեցինք: Է՛լ տրոցկիզմ, է՛լ սաբոտաժ, է՛լ դաշադություն, է՛լ նացիոնալիզմ: Է՛, երեխեք, բա դուք կարծում եք էսքան ազատ կյանքը հե՞շտ ենք կառուցել»:

*Հաճելի էր պապից պապ ու հորից հայր մաշված **փոցո, գոմեշ, հնձել, սամի, թրիք, կորեկ, այ գյադա** բառերի փոխարեն գրնգացնել **գործունեության, գիտակցական կյանք** և ուրիշ նոր, դեռ արկղերից չհանված քամիար մեքենայի պես յուղած նոփ-նոր բառեր: Միայն թե Լևոնը հաճախ մոռանում էր նացիո-նալիզմ բառը և քիչ էր մնում դրա փոխարեն, էնիքը, մեսրոպիզմ ասեր:*

Մեսրոպն անպատասխան չթողեց: Նախ Լևոնը Մեսրոպին խաբել էր, ասել էր մեր հայաստաններում –բաներում մի տեղ էլեկտրական կկառուցես ի փառս քու հայ ժողովրդի ու կգաս, Մեսրոպին այնինչ Սիբիր էին տարել: Մի տասը տարի հետո եկավ, եկավ մտավ գրասենյակ, հավաքեց Լևոնի օձիքն ու թափ տվեց:— Ժողովրդի թշնամի Լավրենտի Բերիային օգնում էիր, հա՞: Իսկ գիտե՞ս, որ Բերիային գնդակահարեցին: Խիղճ ունեցիր ու գնա ասա քեզ էլ գնդակահարեն, խիղճ ունեցիր, խիղճ ունեցիր:

Լևոնը ետ-ետ չարեց: Հավաքեց Մեսրոպի օձիքն ու թափա-հարեց.— Քեզ խելոք պահիր, հա, թե չէ կուսակցությունն էս անգամ չի խղճա, Սիբիրը մեծ է:

Մեսրոպը թողեց նրան, ետ գնաց, ոտից գլուխ չափեց նրան և արհամարհեց.— էդ՝ կուսակցությունը դո՞ւ ես:

Լևոնի տրեխը ծակ էր, գուլպան ծակ էր, կոշիկի ու գուլպայի միասնական ծակից մեծ գլուխը հանել էր բթամատը, Լևոնը սափրված չէր, վրայից գոմահոտ էր գալիս,— Լևոնը չասաց, թե կուսակցությունն ինքն է: Լևոնը խեղճ-խեղճ ասաց.

— Չէ, ես ի՛նչ կուսակցություն եմ:

— Բա էդ ինչի՞ ես անունից խոսում:— Լևոնը չէր պատաս-խանում, և Մեսրոպը հպարտությամբ գամեց:— Սիբիրից ես եմ գալիս, չափերի մասին ինքն է խոսում:

— Դե ինչ անեմ,— ասաց Լևոնը,— ես էլ Բեռլինից եմ գալիս:

Եվ ապա երկուսն էլ լուռ ու ճնշված էին, ու մեղք էին — ջահել օրերի եռանդուն կռիվը վերցնում էին ծերունական ուսերին: Այդ ժամանակ միջամտեց տնտեսության Աբգար նախագահը.

— Պարապ-սարապ քիչ խոսեք։ Գնացեք աշխատեցեք, Լևոն՝ դու ֆերմայի վարիչ, Մեսրոպ՝ դու ձիապան։

Բացառությամբ իրենց ֆերմայական աշխատանքի, նրանք երկուսն էլ ներքուստ դոհ էին ապրած կյանքից։ Նա շքանշանի պես իր աքսորն էր կրում, մյուսի շքանշանն ավելի փայլուն էր՝ սոցիալիզմի ամբողջ նվաճումները։ Այդպես գրանցվում է աշխօրը, քաջագործությունը, գնահատվում է աշակերտը։ Եթե աշխատանքը չդառնար աշխօր, սխրանքը՝ շքանշան, գիտելիքը՝ գնահատական, շատ լավ կլիներ, քանի որ արարքը բեմ չէր հանվի։ Արարքի ետևից բեմ է ելնում արարողը, և այնքա՛ն անելիք է մնում չարված։

Մեսրոպին թվում էր իր արդարությունը հաղթել է, և դրանից էլ դարձել էր մեծախոս։ «Անարդարության ոտները կարճ են, ***Մոսկվա — Կրեմլ, Պրեդսեդատելյու Պրեզիդիումա Վերխովնովո Սավետա Սայուզ ԷՍԷՍԷՌ***, մեր հանդերը մեզ տվեք, հը՞»։

Արջը նրան մի լավ զզեց։ Տասը փթանոց ջլակույտն առած՝ արջը գլուխ դրեց այդ նիհար-միհար բիձուկի հետ։ Սա Սիբիրում ֆրանսերեն մի երկու բառ էր սովորել, ասում էր քաղաքատնտեսություն, Աֆրիկա, Լուկուլլոս, համաշխարհային պատերազմ,— և արջը մանկության ձորերի խաղալիք էր թվում։ Լևոնը նրան ասաց ձորերում արջ է երևացել,— Պարկուճիդ գլխին արճիճ դիր,— ասաց, իսկ նա ասաց.

— Կոտորակը մորթին փչացնում է։

— Քոլ գործն է,— նեղացավ Լևոնը,— իմը զգուշացնելն է։

Աշունքանում էր։ Անտառի զովը դառնում էր ցուրտ և արևը դուրեկան էր։ Հաճարենու կարմիր խաշամը դիզվում ու դիզվում էր, և աղբյուրները լռում էին խաշամի տակ։ Մամուռներից ջուրը քամվում ու կաթում էր զնգոցով, և ծանր էին այդ կաթիլները։ Մամռանկար ժայռերը նայում էին կիսավայրենի պապի նման խոժոռ։ Կիպ-կողքի աճած երկու հաճարենի փափուկ ու տևական քամուց մաշում էին իրար, և մարդ դրանից դառնում էր

ջոյային։ Մոշահավը լուր էր տանում, լուր էր բերում, և Մեսրոպը յոթ անգամ նշան բռնեց, բայց ինքն էլ չէր հասկանում, թե ինչու չի կրակում։ Անտառն անտառ է և կուզես թնդանոթ տրաքացրու՝ միևնույն է, անտառը չես լցնի քեզանով։ Մեսրոպն ուրիշի տուն էր մտել։ Մոշ էր ուտում և ինքը իրեն ասում էր թե մոշ է ուտում ու շատ հանգիստ է։ «Աթոյի խամահատում մոշ եմ ուտում»։ Մեսրոպը կարծում էր այդտեղ կողքերին մի տեղ պիտի գրած լինեն Գիքոր, Լևոն, Մեսրոպ անունները, Մեսրոպն ուզում էր խամահատը լցվեր հին այն օրվա անհամ կատակներով, անալի կարտոլով ու կրակի ճարճատյունով։ Մեսրոպն իրեն ասում էր թե մոշ է ուտում, բայց աչքի պոչով փնտրում էր հին կրակատեղը և չէր ուզում հասկանալ, որ թիկունքն ընդարմանում, մազերը կոշտանում ու գլխարկը գլխին բարձրանում է։

— Կոնսպիրացիա,— ասաց Մեսրոպը։— Հյուսիսային բևեռ, հարավային բևեռ։— Եվ արմունկով զգալով փակաղակի կարծրությունը, Մեսրոպը մտածեց, որ ինքը ժպտում է։— Լավ մոշ է։— Ու նույն պահին էլ տեսավ, որ բուռը բացվում ու մոշերը թափվում են։

Անտառը լռել էր։ Հաճարենիները չէին քսվում իրար, և շուռ եկած ծառի արմատաբուրգին գլուխը դեսուդեն էր թեքում մոշահավը։ Մեկը մի տեղ շունչը պահել էր, և Մեսրոպը սիրտ չէր անում նրան տեսնել։ Ուղեղն ականջների մեջ խշշում էր, ապա քունքից քրտինք գլորվեց։ Արջը։ Նա շուռ եկած հաճարենու մոտ էր, Մեսրոպը կարծես տեսնում էր նրան, բայց չէր կարողանում զատել հաճարենուց։ Ամբողջ հաճարենին արջ էր և ամբողջ անտառն էր արջ։ Մկանների շրշյունով նա կանգնեց, կանգնեց, թաթեր ունեցավ, թաթերին երկարելով կեռվեցին ճանկերը, և շրշյունը լռեց։ Մեսրոպին մի պահ թվաց, թե ինքը երեխա է ու այգի է մտել ու նա Ղալանց մեծ պապն է, նայում է։

— Այ անտեր,— ասի,— երկու մոշ եմ կերել, ես քեզ ի՞նչ եմ արել։ Կանգնել էր ու նայում էր, նայում էր։ Արջ տեսած կա՞ս։

Տեսել էի։— Կամ,— ասացի,— քոթոթների հետ ճամփի վրա կանգնել էր։ Բայց էդ անգամ չվախեցա։ Մի ուրիշ անգամ վախե-

ցա։ Հաչա ծառի արանքում քոթոթ էր սատկել, ընկել էր արանքը, երկու կողմի վրա կախվել ու չէր կարողացել դուրս գա։ Կարծեցի մայրը մոտերքում է ու թաքուն հետևում է։

— Մոտերքում է եղել ու քեզ թաքուն հետևել է, ես դրանց տեսակը դիտեմ։ Աչքերը՝ պարա՛պ, շուն է, գիտե՞ս, շան պես մի բան է։ Բերանը բացեց ու ոռնալով վրա քշեց։ Շուն էր, շան ցեղ էր ու ոռնում էր։ Ու փորատակի շեկ բուրդը օրորքի հետ մգվում-բացվում, մգվում-բացվում էր։

Մեսրոպն զգաց, որ ինքը կատաղում ու պնդանում է, որ ինքն է նրան ուտելու, նա իրեն չի՛ հաղթելու։

— Ինչու էի ջղայնանո՞ւմ։ Անասուն անասունի մեկն էր ու առանց հասկանալու գալիս էր ջարդի։ Չէր մտածում։ Հրացանը կարծես գետնին պիտի լիներ, կարծես թե գետնից վերցրի հրացանը։ Բայց թե երբ էի գցել՝ էդ մեկը լավ չեմ հիշում։ Ինչքան ուժ ունեի՝ կոթով իջա դրա գլխին, պպզեց ու ոռնաց, հրացանր փշրվեց։ Երկաթն ուզեցի կոխեմ բերանը խլեց ու մեկ էլ տեսնեմ գզում է։ Փաթաթել, խառնել է իրեն ու գզում է։ Ցավ չկա, մի սարսափ է, մի տաքություն, գոմռոց ու մի կեղտոտ հոտ։ Ու ձեռներս գցում եմ դրա ձվերին, ձվերին, ձվերին — ձու չկա, չեն բռնվում։ Վերջին հույս են, ձեռս գցում եմ՝ չկան, չկան էդ անտերները։ Պատահել է, չէ՞, ես շատ եմ լսել՝ բռնել ու բաց չեն թողել ձվերը ու հաղթել են։ Բայց ինձ համար՝ չկային։ Ձեռս գցում էի՝ չկային։ Անբախտությունը դրան են ասում, էլի, էդ անտեր բախտից ես չունեմ, հո գոռո՞վ չի, ինձ բաժին չի հասել էդ անտեր բախտից։

— Հետո՞։

— Չեմ հիշում, ասում են շներն են ազատել։

— Լավ, բա էդ ո՞նց կպատահի, որ արջը ձու չունենա։

— Քու գլուխն էլ իմ գլխից է,— ասաց։— Քած է եղել իմ արջը քած է եղել։ Աշխարհը լիքը արջ ու որսորդ է,պիտի հանդիպեն, պիտի կամ կրակելով սպանի, կամ ձվերը ոլորելով, իսկ իմ արջը կոտորակիս օրն ու քած է գալու։ Ամբողջ կյանքս էդ է եղել։

Երկու ամիս նա շրջանային հիվանդանոցում էր պառկել, մի այդքան էլ դռներին էր պտտվում, և այդ ամբողջ ժամանակ նա մտածում էր: Նա ինչ-որ եզրակացության էր եկել և զրուցակից էր փնտրում, բայց գյուղացիները նրա փիլիսոփայության հետ գլուխ չէին դրել ու գլուխ չէին դնում: Նրա զրույցներից գյուղացիները դուրս էին բերել ***արջն ինչու է ուժեղ — որովհետև ձվեր չունի****, բայց դա գյուղացիների սարքածն ու գյուղացիների ուրախությունն էր նրա չմեռնելու համար: Նրա հետ միայն սեբաստացի դարբին Հայկը կարող էր զրուցել, բայց Հայկն էլ սկզբներում աչքը վախեցած էր, վերջերում էլ՝ արդեն հոգնած ու հուսահատված:*

— Վաթսուն տարի ապրել եմ ու թե մի բան եմ հասկացել՝ որսի օրը: Արջն ինչո՞ւ է ուժեղ, որովհետև արջը ծմակ է, ծմակի մի մասն է: Իր մի մասով ծմակը արջ է, դե հիմա գնա գտիր, թե որտեղ է ծմակը վերջանում ու սկսվում արջը: Ուզում էի փախչել՝ ծառերը բռնեցին: Մոշահավը գիտեր արջի մասին ու մի ժամ ինձ մոլորեցնում էր: Դրա համար էլ արջը ուժեղ է:

— Լավ,— ասացի ես,— ի՞նչ է դուրս գալիս, ով ուժեղ է՝ ա՞րջ է:

— Դու մի քիչ սխալ ես ասում, ճիշտն էապես կլինի. ով արջ է՝ ուժեղ է: Այսինքն սեփական ծմակ պիտի ունենաս: Լևոնն, օրինակ, ունի ու ուժեղ է: Ծմակ միայն ես չունեմ:

Նա մտել էր երբեք էլ մայրուղի չհանող մի արահետ, որ նրան տանում ու տանում, խորացնում ու խորացնում էր անտառի վայրենության մեջ արջի ու հաճարենու, քարարծվի ու բվեճի, եղնիկի ու քամու աշխարհ: Այնտեղ ժայռերը ծերունու նման խոժոռվում են, արջը, իբր, ճղճղված կոճղով նվագում է չգիտես ինչ, կայծակները հրդեհում ու անձրևները մարում են կաղնիների հրդեհը: Առվակը թաքցնում է գայլի փափուկ ոտնափոխը և գայլը մոտենում է եղնիկին, իսկ կեչու չոր ճյուղը տեսնում է այդ դավը և կոտրվում ու զգուշացնում է եղնիկին: Եվ խոր ձյուն է լինում և նիրհող անտառը հորինում է գալ ամառվա իր

հեքիաթը, որ սկսվելու է կկվականչով և ավարտվելու է վերջին մոշերը հավաքող արջի ինքնամոռացմամբ և նապաստակի միաչքանի քնով։

*Կացինը ձեռքին՝ ամիսներով նա անտառներում է լինում։ Աղբյուրներին գուռեր է գցում, լորու կեղևից բաժակներ է թողնում աղբյուրների մոտ և աղբրագլխի քարերին, մամուռի մեջ, թողնում է իր անունը՝ **Մեսրոպ Ղ– XX դ**, իբր՝ Մեսրոպ Ղազարյան, քսաներորդ դար։ Թե քո լորու բոժակները քանի՛ շաբաթ են մնալու, թե քո կաղնու գոերը քանի՛ տարի են դիմանալու, թե քո գիրը քանի ամիս է մնալու մամուռին։*

Լևոնը կա։ Գյուղ եկած լրագրողներին ասում է. «Շատ մեծ գործունեություն ունեցա քսան-երեսնական թվականներին, շա՛տ։ Որ Հիշում եմ՝ էդքանն ուղղակի մի մարդու բան չէր»։ Մեսրոպի մասին ասում է. «Լավ մարդ է, բայց իր օգուտն ու վնասը չի ջոկում, ձին քացի է տալիս նրան, եզը՝ հարու։ Անխելք է, ձին պոզ չունի՝ կանգնիր առջևը, եզը քացի չունի՝ կանգնիր ետևը։ Օրենք է, պիտի ենթարկվես»։